

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

11 հուլիսի 2016 թ.

N 177-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների ցանկը հաստատելու մասին» N 268-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 142-րդ, 143-րդ, 144-րդ, 145-րդ, 146-րդ, 147-րդ, 148-րդ, 149-րդ, 150-րդ, 151-րդ, 152-րդ, 153-րդ, 154-րդ, 155-րդ, 156-րդ, 157-րդ և 158-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

142.	Խոզերի պարվովիրուս վարակի և կարմրախտ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Պարվոերիսինս (Parvoerysin) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
143.	Թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդության նկատմամբ Օրնիբուր միջանկյալ պյուս (Ornibur Intermediate Plus) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
144.	Թռչունների պարամիքսովիրուս, պսևդոպեստիս և ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդությունների նկատմամբ Օրնիմիքս Կլոն Բ1+Հ120 (Ornimix Clone B1+H120) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
145.	Ընտանի թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդության նկատմամբ Օրնիբուր միջանկյալ (Ornibur Intermediate) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
146.	Ընտանի թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդության նկատմամբ Օրնիբրոն (Ornibron) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
147.	Խոշոր եղջերավոր կենդանիների ինֆեկցիոն ռինոտրախիտ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն

	հիվանդության նկատմամբ Բիոբոս ԻԲՌ (Biobos IBR) պատվաստանյութ		
148.	Ընտանի թռչունների Նյու-Քասլ հիվանդության նկատմամբ Օրնիպեստ (Ornipest) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
149.	Խոզերի կարմրախտ հիվանդության նկատմամբ Էրիսին Սինգլ Շոտ (Erysin Single Shot) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
150.	Շների լեպտոսպիրոզ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված Բիոկան Լ (Biocan L) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
151.	Շների ժանտախտ, վարակիչ լարինգոտրախեիտ, վարակիչ հեպատիտ, պարվովիրուս և պարազրիպ հիվանդությունների նկատմամբ Բիոկան ԴՀՊՊԻ (Biocan DHPPI) պատվաստանյութ	Չեխիայի Հանրապետություն	«Բիովետա Ա.Ս.» կազմակերպություն
152.	Թռչնագրիպ և Նյու-Քասլ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Վաքս:օն ՆԴ.ԱԻ Ինակ (Vaxxon ND.AI Inac) պատվաստանյութ	Իտալիա	«Իգօ Ս.ռ.լ.» կազմակերպություն
153.	Խոշոր եղջերավոր կենդանիների վարակիչ գնդիկավոր մաշկաբորբ հիվանդության նկատմամբ կենդանի, չոր Լումպիվաքս (Lumpyvax) պատվաստանյութ	Հարավային Աֆրիկայի Հանրապետություն	«ԻՆՏԵՐՎԵՏ Ս.Ա.» կազմակերպություն
154.	Պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով բրուցելյոզի հարուցիչի հայտնաբերման Բրու-Կոմ (Бру-Ком) թեսթ համակարգ	Ռուսաստանի Դաշնություն	«Ռոսպոտրերնադոր համաճարակաբանության կենտրոնական գիտա- հետազոտական ինստիտուտ» գիտության դաշնային բյուջետային հաստատություն
155.	Պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով (Bacillus anthracis) տեսակի բակտերիաների նույնականացման թեսթ համակարգ	Ռուսաստանի Դաշնություն	«Վետբիոխիմ» կազմակերպություն
156.	Խոզերի էնզոտիկ թոքաբորբ հիվանդության նկատմամբ ակտիվազրկված Պնևմովակ (Pneumovac) պատվաստանյութ	Բրազիլիա	«Լաբորատորիոս Վենկոֆարմա դո Բրազիլ Լտդա.» կազմակերպություն
157.	Խոշոր եղջերավոր անասունների պաստերելյոզ, էնտերոտոքսեմիա, պարատիֆ և դիարեա հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Պարավաքս	Բրազիլիա	«Լաբորատորիոս Վենկոֆարմա դո Բրազիլ Լտդա.» կազմակերպություն

	(Paravax) պատվաստանյութ		
158.	Խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախեիտ, վիրուսային դիարեայի, ռեսպիրատոր սինտիցիալ վիրուսի, պարագրիպ և պաստերելոզ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Ռեսպիվակ (Respivac) պատվաստանյութ	Բրազիլիա	«Լաբորատորիոս Վենկոֆարմա դո Բրազիլ Լտդա.» կազմակերպություն

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Ս. Կարապետյան